

**«Հագարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ծրագրի
Շահառուների խորհրդի 4-րդ կազմի 2009 թվականի դեկտեմբերի 8-ին ժամը 16:30-
ին կայացած նիստի**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Նիստին մասնակցում էին Շահառուների խորհրդի անդամներ՝

Անդրանիկ Վերանյան	«Նոյեմբերյանի Համայնքների Միություն» ԻԱՄ
Աշոտ Հովհաննիսյանը	«Դիլենտ սերվիս» կրթական ՀԿ
Գագիկ Բաբախանյանը	«Քաղաքացիական և սոցիալական զարգացման հիմնադրամ» ՀԿ
Լիլիթ Ասատրյանը	«Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» ՀԿ
Կարեն Մաթևոսյանը	«Ազատություն և իրավունք» ՀԿ
Կարինե Մովսիսյան	«Գորիսի երիտասարդական միություն» ՀԿ
Նունե Պեպանյանը	«Լուսաստղ» ՀԿ
Պողոս Շահինյանը	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ
Պարզև Բարսեղյանը	«Հասարակական քարոզչություն» ՀԿ
Կարեն Զադոյանը	«Հայաստանի իրավաբանական հիմնադրամ»
Սյուզաննա Մողոմոնյանը	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցացիա» ՀԿ
Նորայր Դանիելյան, Վիկտոր Ենգիբարյանի լիազոր ներկայացուցիչ	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ
Անահիտ Հակոբյան, Գրիգոր Բաղիրյանի լիազոր ներկայացուցիչ (մասնակցեց սկսած ժամը 17:30-ից)	«Ինտեգրացիոն գործընթացների աջակցության կենտրոն» ՀԿ
Մարատ Ատովյանը	««Պրոգրես» սոցիալական հետազոտությունների կենտրոն» ՀԿ
Հովհաննես Հովհաննիսյանը	««Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոն» ՀԿ

Նիստին մասնակցում էր նաև՝

Արա Հովսեփյանը	Գլխավոր գործադիր տնօրեն, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
Էսթեր Հակոբյանը	Համակարգող ղեկավար, ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ
Լուսինե Խառատյան	Մոնիտորինգի և գնահատման ղեկավար, ՀՄՀ-Հայաստան

Համաձայն ՇԽ Կանոնակարգի 3.12 կետի (ՇԽ նիստերը նախագահում են ՇԽ անդամները՝ ռոտացիոն սկզբունքի հիման վրա՝ ըստ ՇԽ անդամների անունների այբբենական կարգի)՝ նիստը նախագահում էր ՇԽ անդամ Կարեն Զադոյանը:

Նախագահողն առաջարկեց ՇԽ անդամներին առաջարկություններ ներկայացնել օրակարգի վերաբերյալ, եթե կան այդպիսին.

1. 16:30 – ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի 2009թ. դեկտեմբերի 2-ին կայացած նիստի արդյունքների ներկայացում և քննարկում
2. 17:30 – ՀՄՀ-Հայաստան ծրագրի առաջընթացի ներկայացում
ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Գ.Գ.Տ Արա Հովսեփյան
3. 17:45 - Այլ հարցեր

Նախագահող Կարեն Զադոյանն առաջարկեց օրակարգում ընդգրկել հետևյալ հարցերը, որոնք, ի դեպ, նախօրոք ներկայացվել էին գրավոր տեսքով ՇԽ յոթ անդամների կողմից՝

1. ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր իրավախորհրդատույին Ալեքս Ռ-ասինի կողմից հղված պատասխանի քննարկում
2. ՇԽ 8 անդամների կողմից կայացված որոշումները չեղյալ համարելու հարցը
3. ՇԽ ընտրական քվեաթերթիկների վերահաշվարկի հարցը: (Այս նպատակով առաջարկում ենք ստեղծել հանձնաժողով, որը բաղկացած կլինի ՇԽ 2 անդամներից, ՇԽ ընտրությունները կազմակերպած ընտրական հանձնաժողովի 2 ներկայացուցիչներից և կորպորացիայի 1 ներկայացուցիչից):

ՇԽ անդամ Լ. Աստրյանը առաջարկեց օրակարգը թողնել նույնը, իսկ ներկայացված առաջարկությունները քննարկել այլ հարցերի շրջանակներում՝ ըստ առաջնահերթությունների:

Ս. Սողոմոնյանը նշեց, որ Կ. Զադոյանի կողմից ներկայացված առաջարկությունները արհրաժեշտ է քննարկել որպես օրակարգային առանձին հարցեր՝ հաշվի առնելով դրանց կարևորությունը:

Կ. Զադոյանն առաջարկեց այսուհետ ֆիկսել ՇԽ օրակարգի այլ հարցերի շրջանակներում ընդգրկվելիք բոլոր հարցերը:

Կ. Մաթևոսյանը հակադրվեց այլ հարցերում քննարկվելիք առաջարկությունները ֆիքսելու գաղափարին և առաջարկեց այլ հարցերը թողնել բաց՝ չսահմանափակելով քննարկման շրջանակները:

Ա. Վերանյանը հորդորեց ՇԽ անդամներին քննարկել բոլոր առաջադրվող խնդրահարույց թեմաները՝ որպես օրակարգային հարցեր այն պայմանով, որ դրանք մեկընդմիջտ դուրս կգան ՇԽ օրակարգից՝ բացառությամբ քվեաթերթիկների վերանայման հարցը, որ արդեն բազմաթիվ անգամներ քննարկվել է և համարվում է սպառված թեմա:

Նախագահողն առաջարկեց առանձին քվեարկություն անցկացնել օրակարգային հարցերի շուրջ:

Օրակարգի առաջին հարց՝ «ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի 2009թ. դեկտեմբերի 2-ին կայացած նիստի արդյունքների ներկայացում և ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր իրավախորհրդատույին Ալեքս Ռասինի կողմից հղված քննարկում»։ կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 1:

Օրակարգի երկրորդ հարց՝ «ՀՄՀ-Հայաստան ծրագրի առաջընթացի ներկայացում» կողմ՝ 11, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 2:

Օրակարգի երրորդ հարց՝ «ՇԽ 8 անդամների կողմից կայացված որոշումները չեղյալ համարելու հարցը»։ կողմ՝ 8, դեմ՝ 4, ձեռնպահ՝ 0, քվեարկությանը չի մասնակցել մեկ ՇԽ անդամ:

Օրակարգի չորրորդ հարց՝ «ՇԽ ընտրական քվեաթերթիկների վերահաշվարկի հարցը»։ կողմ՝ 6, դեմ՝ 8, ձեռնպահ՝ 0:

Կ. Մաթևոսյանը ևս մեկ անգամ հնչեցրեց ՇԽ օրակարգերի այլ հարցերը չֆիկսելու առաջարկությունը, որը դրվեց քվեարկության և հաստատվեց 7 կողմ, 6 դեմ և 1 ձեռնպահ ձայներով:

Մինչ օրակարգային թեմաների քննարկմանն անցնելը Լ. Ասատրյանն առաջարկեց ՇԽ օգնականին, որպեսզի ՇԽ 8 անդամների կողմից մամակը ուղղված ՀՀ Վարչապետին, ԱՄՆ դեսպանին և ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի ԳԳՏ-ին նույնպես տեղադրվի ՀՄՀ-Հայաստանի կայքում:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ ՀՄՀ-Հայաստանի ԳԳՏ Արա Հովսեփյանը: Նա ներկայացրեց դեկտեմբերի 2-ին կայացած ԿԽ նիստին քննարկված ծրագրային հարցերը, որից հետո անդրադարձ կատարեց ՇԽ-ին առնչվող հարցերին: Ա. Հովսեփյանը նշեց, որ ՀՄՀ-Հայաստանը նախատեսում է առաջիկայում ակտիվացնել իր հանրային կապերը և ծրագրի վերաբերյալ տեղեկացվածությանը բարձրացմանն ուղղված միջոցառումները, ինչը կարևորվել է նաև ՀՀ Վարչապետ Տ. Սարգսյանի կողմից: Այս առումով կարևոր է նաև ՇԽ անդամների դերը և ակտիվ մասնակցությունը բոլոր հանրային միջոցառումներին: Ինչ վերաբերում է ՇԽ-ում ձևավորված ներքին ոչ բարենպաստ մթնոլորտի վերաբերյալ քննարկմանը, որով, ի դեպ, պայմանավորված էր ՀՄԿ որոշումը չհաստատել ԿԽ նոր պատվիրակների ընտրությունը, Ա. Հովսեփյանը նշեց, որ և՛ ՀՄԿ-ն, և՛ Կառավարության ներկայացուցիչները ցանկանում են ևս մեկ հնարավորություն ընձեռել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին լուծել ներքին խնդիրները և գտնել համագործակցության ուղիներ:

Ա. Հովսեփյանը նաև կոչ արեց ՇԽ անդամներին առաջ եկած խնդիրներին նայել ավելի լայն աշխատանքային և փորձել գտնել արդյունավետ լուծումներ: Որպես ԿԽ անդամների ընտրության և պատվիրակման ինստիտուտի արդյունավետության բարձրացման հնարավոր մեխանիզմներ Ա. Հովսեփյանը առաջ քաշեց հետևյալ երկու առաջարկությունները.

1. Կառավարման խորհուրդ պատվիրակված անդամները դուրս գան ՇԽ կազմից և նրանց փոխարեն ՇԽ-ը համարվի նոր անդամներով (այս տարբերակը բազմաթիվ անգամներ քննարկվել է ՇԽ նախորդ կազմերի կողմից)

2. ԿԽ անդամների ընտրությունը իրականացնել ՇԽ անդամների առնվազն 2/3-ի մասնակցությամբ:

Վերոնշյալ առաջարկությունները մեջբերելով որպես օրինակներ՝ Ա. Հովսեփյանը կարծիք հայտնեց, որ նման տարբերակներով հնարավոր կլինի հաղթահարել ՇԽ ներքին կանոնակարգային խնդիրները:

ԿԽ անդամ Պ. Շահինյանը ԿԽ նիստի վերաբերյալ նշեց, որ երկու կողմերի դիրքորոշումներն էլ հստակորեն ներկայացվեց ԿԽ նիստի ժամանակ:

ԿԽ անդամ Կ. Չաղոյանը նշեց, որ Կառավարման խորհրդի կողմից առաջարկվել է մինչ դեկտեմբերի 16-ը գտնել լուծումներ ստեղծված իրավիճակը հաղթահարելու նպատակով:

Ներկայացվածի վերաբերյալ ծավալված քննարկումը ներկայացնում ենք ստորև.

ՇԽ անդամ Ա. Վերանյանը հանդես եկավ առաջարկությամբ ստեղծել ՇԽ հանձնախումբ, որը մանրամասն կքննարկի ՇԽ խնդրո առարկաները և առաջիկա ՇԽ նիստին կներկայացնի հստակ լուծումների առաջարկություններ: Սակայն առաջարկեց ՇԽ անդամներին վերապահումով մոտենալ ՇԽ նոր ընտրություններ անցկացնելու առաջարկությանը, որը կառնչվի ոչ միայն ՇԽ անդամներին, այլ բազմաթիվ այլ անձանց:

Կ. Մաթևոսյանը առաջարկեց ԿԽ անդամների պատվիրակների ընտրությունը ֆիկսել որպես խնդրո առարկա և սկսել հարցի քննարկումը ՇԽ ամբողջ կազմով:

Պ. Շահինյանն կոչ արեց ՇԽ անդամներին քննարկումները սկսել նոր էջից և մոռանալ հնչեցրած մեղադրանքները:

Քննարկման արդյունքում ձևավորված հետևյալ հիմնական առաջարկությունները դրվեցին քվեարկության.

- ստեղծել 6 հոգուց բաղկացած հանձնախումբ ՇԽ ներքին խնդրահարույց հարցերը քննարկելու և լուծումներ առաջարկելու նպատակով. կողմ՝ 12, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 2:
Հանձնաժողովի կազմում ընդգրկել հետևյալ ՇԽ անդամներին՝ Լ. Ասատրյան, Կ. Մաթևոսյան, Պ. Շահինյան, Կ. Չաղոյան, Գ. Բաղիրյան, Մ. Ատովմյան:
- հանձնախմբին լիազորել քննարկել միայն ԿԽ ընտրությունների հարցը (Կ. Մաթևոսյանի առաջարկությամբ). կողմ՝ 3, դեմ՝ 7, ձեռնպահ՝ 5:

Այսպիսով, ՇԽ անդամները հանձնարարեցին հանձնախմբի անդամներին մանրամասն քննարկել ՇԽ ներքին խնդիրները և դեկտեմբերի 14-ին կայանալիք ՇԽ նիստին հանդես գալ լուծումային առաջարկություններով:

Նախագահող՝

Կ. Չաղոյան

Քարտուղար՝

Վ. Գրիգորյան

8-րդ դեկտեմբերի, 2009թ.